



ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ ԴԻՕՇԵՍ ԱՐՄԵՆԻԵՆ ԴՍ ԿԱՆԱԴԱ

ԿԱՆՆԹԵՂ

Ս.Բ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԱՈՒՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՅՈՑ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTREAL

ՄԱՅՐ ՏԱԵՐ

ԿԻՐԱԿԻ, 25 Օգոստոս 2019 **125** *DIMANCHE, 25 Août 2019*



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Բ ԿԻՐԱԿԻ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ
2^{ÈME} DIMANCHE APRÈS L'ASSOMPTION

Աստուածաշունչի Ընթերցումներ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԿՈՐՆԹՈՍՅԻՆԵՐՈՒՆ
ԳՐՈՒԱԾ ԵՐԿՈՐԴ ՆԱՄԱԿԷՆ

(6.16-7.1)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

(1.39-56)

Les lectures de la Bible d'aujourd'hui

2 CORINTHIENS 6.16-7.1

LUC 1.39-56

Պատարագիչ եւ քարոզիչ / Celebrant
ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ ՔԶՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Հոգեւոր Հովիւ

Célébrant:

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Prêtre Paroissial

Առաւօտեան Ժամերգութիւն ժամը 9:30-ին

Office Matines à 9h30

Ս. Պատարագ ժամը 10:30-ին

La Sainte Messe à 10h30

Հոգեհանգիստ ժամը 12:00-ին

Requiem à 12h00

DIACRES – ACOLYTES

Chef de choeur: M. Sarkis Barsemian

Organiste: Mme Houry Bedrossian

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

**LES LECTURES
DE DIMANCHE**



**THE SUNDAY
READINGS**

2 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ 6.16-7.1

16 Եւ ի՞նչ համաձայնութիւն ունի Աստուծոյ տաճարը կուռքերուն հետ, որովհետեւ դուք ապրող Աստուծոյ տաճարն էք՝ ինչպէս Աստուած ըսաւ. «Անոնց մէջ պիտի բնակիմ եւ անոնց մէջ պիտի շրջիմ. անոնց Աստուած պիտի ըլլամ ու անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան: 17 Ուստի ելէ՛ք անոնց մէջէն եւ զատուեցէ՛ք,- կ'ըսէ Տէրը:- Ամաքուր բանի մի՛ դպչիք, 18 ու ես պիտի ընդունիմ ձեզ. ես Հայր պիտի ըլլամ ձեզի, ու դուք՝ իմ որդիներս եւ աղջիկներս պիտի ըլլաք,- կ'ըսէ Ամենակալ Տէրը»:

7.1 Ուրեմն, սիրելիներ, այս խոստումները ունենալով՝ մաքրե՛նք մենք մեզ մարմինի ու հոգիի ամէն տեսակ պղծութենէ, եւ կատարելագործե՛նք սրբացումը Աստուծոյ վախով:

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 1.39-56

39 Այդ օրերը Մարիամ կանգնեցաւ, փութալով գնաց լեռնակողմը՝ Յուդայի մէկ քաղաքը, 40 մտաւ Չաքարիայի տունը եւ բարեւեց Եղիսաբէթը: 41 Երբ Եղիսաբէթ լսեց Մարիամի բարեւը, երախան խայտաց անոր որովայնին մէջ. իսկ Եղիսաբէթ լեցուեցաւ Սուրբ Հոգիով, 42 ու բարձրաձայն գոչելով ըսաւ. «Դուն օրհնեա՛լ ես կիներուն մէջ, եւ օրհնեա՛լ է որովայնիդ պտուղը: 43 Այս ի՞նչպէս եղաւ, որ իմ Տէրոջս մայրը եկաւ ինծի. 44 որովհետեւ ահա՛ երբ քու բարեւիդ ձայնը հասաւ ականջիս, երախան ցնծութենէն խայտաց որովայնիս մէջ: 45 Երանի՛ անոր՝ որ հաւատացած է, որովհետեւ՝ պիտի կատարուին այն

բաները՝ որոնք Տերոջմէն ըսուեցան իրեն»։ 46 Մարիամ ըսաւ. «Իմ անձս կը մեծարէ Տէրը, 47 եւ իմ հոգիս ցնծաց իմ Փրկիչ Աստուծոյս, 48 քանի որ նայեցաւ իր աղախինին նուաստութեան. արդարեւ ասի՛ր ասկէ ետք՝ բոլոր սերունդները երանելի պիտի կոչեն զիս, 49 որովհետեւ Յօգորը մեծամեծ բաներ ըրաւ ինծի։ Անոր անունը սուրբ է, 50 եւ անոր ողորմութիւնը իրմէ վախճողներուն վրայ է՝ սերունդէ սերունդ։ 51 Իր բազուկով զօրութիւն ցոյց տուաւ, ցրուեց ամբարտաւանները իրենց սիրտին երեւակայութեամբ։ 52 Չօրաւորները իջեցուց իրենց գահերէն, ու բարձրացուց նուաստները։ 53 Անօթիները լիացուց բարիքներով, եւ պարապ ճամբեց հարուստները։ 54 Օգնութեան հասաւ իր Իսրայէլ ծառային, յիշելով իր ողորմութիւնը 55 ինչպէս ինք խոստացած էր մեր հայրերուն - Աբրահամի եւ անոր զարմին հանդէպ՝ յաւիտեան»։ 56 Մարիամ անոր քով մնաց՝ գրեթէ երեք ամիս, ապա վերադարձաւ իր տունը։

2 Corinthiens 6.16-7.1

16 Et quelle convenance y a-t-il du Temple de Dieu avec les idoles? car vous êtes le Temple du Dieu vivant, selon ce que Dieu a dit : j'habiterai au milieu d'eux, et j'y marcherai; et je serai leur Dieu, et ils seront mon peuple. 17 C'est pourquoi sortez du milieu d'eux, et vous en séparez, dit le Seigneur; et ne touchez à aucune chose souillée et je vous recevrai; 18 Et je vous serai pour père, et vous me serez pour fils et pour filles, dit le Seigneur Tout-puissant.

7.1 Or donc [mes] bien-aimés, puisque nous avons de telles promesses, nettoyons-nous de toute souillure de la chair et de l'esprit perfectionnant la sanctification en la crainte de Dieu.

Luc 1.39-56

39 Or en ces jours-là Marie se leva, et s'en alla en hâte au pays des montagnes dans une ville de Juda. 40 Et elle entra dans la maison de Zacharie, et salua Elisabeth. 41 Et il arriva qu'aussitôt qu'Elisabeth eut entendu la salutation de Marie, le petit enfant tressaillit en son ventre, et Elisabeth fut remplie du Saint-Esprit. 42 Et elle s'écria à haute voix, et dit : tu es bénie entre les femmes, et béni [est] le fruit de ton ventre. 43 Et d'où me vient ceci, que la mère de mon Seigneur vienne vers moi? 44 Car voici, dès que la voix de ta salutation est parvenue à mes oreilles, le petit enfant a tressailli de joie en mon ventre. 45 Or bienheureuse est celle qui a cru : car les choses qui lui ont été dites par le Seigneur, auront [leur] accomplissement. 46 Alors Marie dit : Mon âme magnifie le Seigneur; 47 Et mon esprit s'est égayé en Dieu, qui est mon Sauveur. 48 Car il a regardé la bassesse de sa servante; voici, certes désormais tous les âges me diront bienheureuse. 49 Car le Puissant m'a fait de grandes choses, et son Nom est Saint. 50 Et sa miséricorde est de génération en génération en faveur de ceux qui le craignent. 51 Il a puissamment opéré par son bras; il a dissipé les desseins que les orgueilleux formaient dans leurs cœurs. 52 Il a renversé de dessus leurs trônes les puissants, et il a élevé les petits. 53 Il a rempli de biens ceux qui avaient faim; il a renvoyé les riches vides. 54 Il a pris en sa protection Israël, son serviteur, pour se souvenir de sa miséricorde; 55 (Selon qu'il [en] a parlé à nos pères, [savoir] à Abraham et à sa postérité) à jamais. 56 Et Marie demeura avec elle environ trois mois, puis elle s'en retourna en sa maison.



Հոգեւոր Հովիւի Պատգամը

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն:

Վերափոխման տօնի Երկրորդ Կիրակիին

Իմ գրասեղանիս վրայ գիրք մը կայ դրուած, որ կը կոչուի «Յայսմաւուրք»: Ան Հայ Եկեղեցւոյ տօնելի սուրբերուն վարքը եւ ամէնօրեայ տօներուն նկարագրութիւնն է: Եւ ամէն օր սենեակէն դուրս գալէս առաջ ես կը կարդայի այդ օրուան նիւթերը: Զանի որ մինչեւ այսօր «Յայսմաւուրք» գիրքին ժողովրդական հրատարակութիւնը գոյութիւն չունի եւ դուք հնարաւորութիւն չունիք ընթերցելու այդ գիրքը, ես կը ցանկամ ձեզի պատմել այն, ինչ որ կարդացի ես այսօր այդ գիրքին մէջ:

Սուրբ Աստուածածինը երկրային կեանքին մէջ հասած էր իր կեանքի յիսունիններորդ տարուն, եւ կը մօտենար իր օրերուն աւարտը այս աշխարհին մէջ ապրելու: Գաբրիել հրեշտակապետը, որ տարիներ առաջ տեսիլքով եկաւ եւ ակնտեց Աստուածածինն Քրիստոսի ճննդեան լուրը, եկաւ դարձեալ երկիր, ներկայացաւ սուրբ Աստուածածինն եւ ըսաւ, որ երեք օր յետոյ Ան պիտի աւանդէ հոգին: Աստուածամայրը ոտքի կանգնեցաւ, դուրս եկաւ իր տունէն, գնաց պարտեզ եւ սկսաւ աղօթել: Երբ Ան կը քալէր ծառերու կողմով, բոլոր բոյսերը եւ բոլոր խոտերը կը խոնարհէին Անոր առջեւ: Գաբրիել հրեշտակապետը Անոր յանձնեց նաեւ արմաւենիներու

ուստրերով պատրաստուած պսակ մը: Եւ Աստուածամայրը աղօթեց Իր Որդիին եւ ըսաւ. «Տեր Յիսուս Բրիստոս, Դուն խոստացար, որ Չիս մինակ չես թողեր այս երկրին վրայ, եւ խոստացար, որ անձամբ կու գաս եւ կը ստանաս Իմ հոգիս»: Երբ Ան վերադարձաւ տուն, տեսաւ, որ բոլոր առաքեալները հաւաքուած են տան շէմքին, առանց մէկը միւսին լուր տալու, որովհետեւ այն ժամանակ հեռախօսներ չկային, հեռագրեր չկային, եւ նամակագրութիւնը շատ երկար ամիսներ կը տուէր: Ուրեմն, առանց մէկը միւսին լուր տալու յանկարծ բոլորը կը հաւաքուին Աստուածամօր առջեւ: Եւ երբ Աստուածամայրը ներս կը մտնէ եւ կը բազմի Իր մահիճին վրայ, անոր շուրջը կը հաւաքուին բոլոր առաքեալները եւ կը սկսին պատմութիւններ պատմել: Այդ ժամանակ Աստուածամօրը սպասարկող կանայք եւ կոյսերը հետաքրքրութեամբ հարցումներ կու տային առաքեալներուն: Եւ ահա թէ՛ ինչ կը պատմէ Պետրոս առաքեալը: Ան կ'ըսէ. «որ երբ մեզմէ որեւէ մէկը կը պատրաստուի այն աշխարհը երթալու եւ աւանդելու իր հոգին, երկու հրեշտակներ կու գան՝ մէկը՝ բարութեան, միւսը՝ չարութեան: Եւ եթէ մարդը իր կեանքի ընթացքին աւելի մեղքեր գործած է, քան բարի գործեր, կը ցնծան դէւերը, կը ցնծան սատանաները, որովհետեւ չարութեան հրեշտակը պիտի աւանդէ այդ մարդուն հոգին եւ տանի դէպի դժոխք: Իսկ եթէ այդ մարդուն արդար գործերը շատ են, կը նշանակէ՝ բարութեան հրեշտակը պիտի աւանդէ այդ հոգին եւ այդ մարդուն հոգին տանի դէպի դրախտ»: Ահա այսպիսի պատմութիւններով, երգերով եւ սաղմոսներով կ'անցնին այդ երեք օրերը, եւ յանկարծ կը դողդայ երկինքը, կը դողդայ երկիրը, եւ նոյն Ինքը՝ Յիսուս Բրիստոս, դարձեալ կ'իջնէ երկիր՝ Իր Մօր հոգին անձամբ աւանդելու եւ ստանալու: Եւ երբ Ան կը ստանայ սուրբ Կոյսի հոգին, բոլորը կը տեսնեն, թէ ինչպէս Անոր հոգին ճերմակ, ձիւռ նման սպիտակ եւ տեսանելի է բոլորին: Կը հարցնեն ներկաները, թէ ինչո՞ւ է այդ հոգին այդքան սպիտակ, եւ Բրիստոս կը պատասխանէ, որ ծննդեան ժամանակ մեզմէ ամէն մէկուն հոգին այդքան մաքուր եւ այդքան սպիտակ է: Մեր կեանքի ընթացքին, երբ մենք

մեղք կը գործենք, կամաց-կամաց այդ սպիտակութիւնը կը փոխուի սեւութեան:

Քրիստոս կը պատուիրէ առաքեալներուն, որ Աստուածամօր մարմինը գետեղէն գերեզմանի մը մէջ եւ երեք օր չբացակային եւ երեք օր սաղմոսներ կարդան: Եւ ահա երեք օր անց առաքեալներէն մէկը, որ չէր հասցուցած ժամանակին գալ, երբ կը հասնի Երուսաղէմ, կը ինդրէ ցոյց տալ իրեն Աստուածամօր դին, որպէսզի կարողանայ իր հրաժեշտը տալ Աստուածամօր: Երբ առաքեալները կ'երթան եւ կը բանան գերեզմանը, կը տեսնեն, որ այնտեղ միայն սաւանը կայ, որուն հետ փաթած էին Աստուածամօրը: Աստուածամօր մարմինը փոխադրուած էր, ինչպէս գրուած է «Յայսմաւուրք»-ին մէջ, այնտեղ, ուր պատուիրած էր Քրիստոս:

Սա է, սիրելի հաւատացեալներ, սուրբ կոյս Աստուածամօր վերափոխման պատմութիւնը, որ գրուած է մեր Եկեղեցոյ սուրբ գիրքերուն մէջ: Եթէ մենք ուշի ուշով կարդացած ենք Աւետարանը, ապա նկատած ենք, որ շատ յաճախ Քրիստոս առակներով կը սորվեցներ մեզի, թէ մենք ինչպէս պիտի ապրինք: Շատ յաճախ նաեւ՝ Քրիստոս իր կեանքի օրինակներն ալ առակ կը դարձներ եւ իր կեանքի օրինակով կը սորվեցներ մեզի, թէ՛ ինչպէս պետք է ապրիլ, որպէսզի արժանանանք երկինքի արքայութեան: Աստուածամօր վերափոխման այս պատմութիւնը առակ մըն է մեզի համար, դաս մը եւս, օրինակ մը: Ի՞նչ կը քաղենք մենք անկէ: Մենք կը տեսնենք, թէ ինչպէս, երբ Քրիստոս աւանդեց սուրբ Կոյսի հոգին, այն ճերմակ էր: Եւ մենք գիտենք, սորվեցանք այդ պատմութենէն, որ ճերմակ եղած են մեր բոլորին հոգիները: Եւ երբ հրեշտակը գայ, մենք այնպէս պիտի ընենք, որ բարութեան հրեշտակը աւանդէ մեր հոգին, որ մեր հոգին, որքան հնարաւոր է, ճերմակ մնայ մեր կեանքի ընթացքին: Եւ եթէ կեանքի ընթացքին սեւ բիծեր ըլլան այնտեղ, կարողանանք մեր պահեցողութեամբ, մեր աղօթքներով եւ մեր եկեղեցական մասնակցութեամբ նորէն ջնջել այդ բիծերը եւ նորէն ճերմկցնել:

Սիրելի՛ հաւատացեալներ, այս դասով եւ այս առակով եւ կը մաղթեմ, որ մեր բոլորին հոգիները միշտ ճերմակ մնան: Կը հրաւիրեմ ձեզի նաեւ Սուրբ Պատարագի արարողութեան ժամանակ եւ նաեւ՝ յատկապէս յաջորդող օրերուն դիմենք, հայցենք, ինդրենք օժանդակութիւնն ու կատարեալ բարեխօսութիւնը Սուրբ Աստուածամօր մեր ճերմակութեան ձգտող հոգիներուն համար, որպէսզի այդ բարեխօսութեան միջոցով բարութիւնը լեցուի մեր բոլորին տուները այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Օրհնութեամբ՝
Տէր Դաւիթ Զահանայ Մարգարեան

SOLԵՐ

Երեքշաբթի – 20 Օգոստոս 2019

Ս. Յովակիմի եւ Աննայի՝ Ս. Աստուածածնի Ծնողներու եւ Իւղաբեր Կանանց Յիշատակութեան Օր

Սուրբ Յովակիմի եւ Աննայի անունները անմիջապէս կը կապուին Յիսուսի հետ՝ ըլլաով Աստուածամօր ծնողները: Ըստ աւանդութեան՝ բարեպաշտ և մեծահարուստ Յովակիմը Դաւիթի ցեղէն էր՝ թագաւորական ընտանիքէ, իսկ Աննան՝ քահանայական ընտանիքէ: Օր մը, տաճարին մէջ ընծայ մատուցելու ընթացքին, քահանան Յովակիմին կը պատուիրէ վերջաւորութեան կանգնիլ, քանի որ ան անգաւակ էր:

Ասկէ վշտացած՝ Յովակիմը դուրս կը վազէ եւ անմիջապէս լեռ կը բարձրանայ՝ երդում ընելով չիջնել այնտեղէն մինչեւ Աստուծոյ այցելութիւնը: Անոր օրինակով Աննան ալ տան



մէջ կ'աղօթէր եւ ապաշխարութեան կը նուիրուի: Եւ օր մը, երբ Աննան պարտեզին մէջ կը տեսնէ իրենց ձագերուն հետ խաղցող թռչունները, կը տխրի եւ կու լայ, քանզի ինքը գրկուած էր մայրանալու շնորհքէ: Այդ պահուն կը յայտնուի Աստուծոյ հրեշտակը եւ կ'աւետէ, որ զաւակ պիտի ունենայ, որուն երանի պիտի տան բոլոր ազգերը: Նոյն տեսիլքը կ'երեւի նաեւ՝ Յովակիմին, որ ուրախութենէն կը սկսի ողորմութիւն բաժնել աղքատներուն: Աննան կը յղիանայ, եւ ծնուած հրեշտականման մանկան կ'անուանեն Մարիամ, որ կը նշանակէ լուսաւորեալ: Իւղաբեր կանայք Յիսուսի չարչարանքներուն, թաղման եւ խաչելութեան ականատեսներն են: Անոնք Տիրոջ Յարութեան առաջին ակետաբերներն են: Իւղաբեր կանայք Զրիստոսին հետեւեցան իր ողջ երկրային առաքելութեան իրագործման ընթացքին: Եկեղեցւոյ կողմէ անոնք կը կոչուին «Իւղաբեր», որովհետեւ Միաշաբթի (Կիրակի) առաւօտ գերեզման գացին՝ Յիսուսի մարմինը իրենց պատրաստած անուշահոտ իւղերով օծելու: Իրենց անձնուիրութեան շնորհիւ անոնք առաջինը տեսան Յարուցեալ Փրկիչին եւ այդ մասին յայտնեցին առաքեալներուն: Անոնք նաեւ՝ խմբովին ներկայ էին Վերնատան՝ Հոգեգալուստին եւ առաքեալներուն հետ ստացան Սուրբ Հոգիին շնորհները:

Հինգշաբթի, 22 Օգոստոսի 2019

Սուրբ Երեմիայ Մարգարէի Յիշատակութեան Օր

Երեմիա մարգարէն Աստուածաշունչի չորս մեծ մարգարէներէն է: Անոր մասին, համեմատաբար ակելի շատ վաւերական տեղեկութիւններ կան: Ծնած է Ն.Ք. 650-ական թուականներուն, Երուսաղէմէն ոչ շատ հեռու գտնուող Ասաթովթ գիւղը: Անոր հայրը՝ Զեդկիան, քահանայ էր: Երեմիան քարոզած եւ ապրած է Երուսաղէմի մէջ: Երիտասարդ տարիքէն Աստուծոյ կողմէ կանչուած ըլլալով՝ ողջ սիրտով ծառայած է իր մարգարեական կոչման՝ հրաժարելով ընտանիք կազմելէ եւ կեանքի բոլոր վայելքներէն: Կռապաշտութեան եւ

ընկերային անարդարութեան մէջ ինկած ժողովուրդը չէր ըմբռներ անոր ազնիւ մղումները, մինչդեռ ան կը մարգարեանար Երուսաղէմի ու Տաճարի կործանման մասին: Իր ազգի անդառնալի մոլորուած ընթացքին պատճառով ան անընդմէջ ճշմարիտ աստուածպաշտութիւն կը քարոզէր, որպէսզի մարդիկ փոխեն իրենց ընթացքը, իրարու հետ արդար եւ ուղիղ ապրին. օտարականին, որբին եւ այրիին չհարստահարեն, արդար եւ անմեղ արիւն չթափեն, օտար աստուածներու ետեւէն չերթան՝ ի կործանում իրենց անձերուն (Երեմ. 7:1-6 հմմտ. 5:25-29):

Holidays

Tuesday, August 20, 2019

Commemoration of Sts. Joachim and Anna, Parents of the Holy Mother of God, and Oil- Bringing Women

The names of St. Joachim (Jehoiakim) and Anna are closely related to Jesus, as they are the parents of the Holy Mother of God.

According to the tradition, wealthy Joachim was a descendant of King David, and Anna was the daughter of a priest. One day, when performing a service in the cathedral, the priest tells Joachim to stand in the end, as he had no son. Becoming upset, Joachim comes out of the Cathedral and immediately climbs up the mountains, vowing not to descend the mountain until the visit of God. Following his example, Anna, staying at home, devotes herself to prayer and repentance. And once, when Anna sees in the garden the birds playing with their nestlings, becomes sad and cries, as she wasn't granted the grace of being a mother. Just at that moment the Angel of God visits Anna, telling her that God will be granting her a son who will be the mother of the Savior of the world. Joachim also has the

same vision and becoming very happy, gives alms to the poor. The parents decide to devote the baby to the Church. The baby is named Mary, which means “Illuminated”. The oil-bringing women are the witnesses of Christ’s torments. They are the first to give the good tidings of the Resurrection of our Lord. The Oil-Bringing women followed Christ during all the time of realizing His earthly mission. The church calls them “Oil-Bringing Women” as on Sunday, in the morning, they hurried to the tomb to anoint the body of Jesus by the aromatic oils prepared by themselves.

Thanks to their devoutness they were first to see the Resurrected God and told about it the Apostles. They were in the upstairs during Pentecost and together with the Apostles received the graces of the Holy Spirit. The Armenian Apostolic Church commemorates the memory of St. Joachim and Anna together with the oil-Bringing Women.

Thursday, August 22, 2019

Commemoration of the Prophet Jeremiah

Prophet Jeremiah is one of the four Major Prophets of the Old Testament. In comparison with other persons and saints of the Holy Bible, there is much more and rather trustworthy information about the Prophet Jeremiah.

The Prophet Jeremiah lived during the latter part of the seventh century and the first part of the sixth century B. C.

He was the son of Hilkiah, one of the priests of the town Anathoth not far from Jerusalem. He lived and preached in Jerusalem.

Feeling the calling to serve God he has devoutly served



refusing to marry and have his own family. The people, being idolatrous and experiencing social difficulties and unfairness, could not understand his honest motives. As the result of such attitude the Prophet Jeremiah prophesizes the fall of Jerusalem and the destruction of Temple. Witnessing his nation's idolatry and sin, he continuously preaches equality and true faith in God, exhorts them to change the way they are living and to be fair in their treatment of one another, to stop taking advantage of aliens, orphans and widows, to stop killing innocent people in this land, to stop worshipping other gods, for that will destroy them (The Book of Jeremiah, 7: 1-6 compare with 5:25-28).

Շարժուայ խորհրդածութիւնը

«Իսկապէս հաւատայ, որ մենք կը տառապինք այնքան ատեն, քանի դեռ խոնարհած չենք: Երբ խոնարհինք, կու գայ տառապանքներու վերջը, քանի որ Աստուծոյ Հոգին խոնարհութեան համար կ'աւետէ հոգիին, որ ան փրկուած է»:

Ս. Միվղանու Աթոսացի

«Մի ըսէք, թէ կորսուած ենք, մի յուսահատիք, ոչ ալ թոյլ տուէք, որ հաւատքի լաւատեսութիւնը բաժնուի ձեզմէ: Թող ձեր հաւատքը զօրաւոր ըլլայ՝ վստահ եղէք, որ Աստուած կրնայ ճամբայ բանալ ձուզուն մեզ...»:

Շենուտա Գ հայրապետ

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

- Ուղղվելու առաջին պայմանը իր մեղքի գիտակցումն է: Սենեկա
- Եթե ես բանտարկվեի և ինձ թույլ տային վերցնել միայն մեկ գիրք, ես կընտրեի Աստվածաշունչը: Յոհան Վոլֆգանգ Գյոթե
- Ամենաուժեղը և ամենաբարձրահասակը ծնկի եկած քրիստոնյան է: Ջորջ Մյուլլեր
- Ոմանք վախենում են Աստծուն կորցնել, իսկ ոմանք... գտնել: Բլեզ Պասկալ

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Մեր սիրելի հաւատացեալներուն ուշադրութեան կը յանձնենք թէ յետայսու Յուդարկաւորութիւններու ընթացքին հանգուցեալի հարազատներէն կը խնդրուի նկատի ունենալ, թէ արարողութեան ընթացքին որեւէ սրտի խօսք կամ դամբանական կարդացուելէն առաջ, հարկ է նախօրօք կապ հաստատել Եկեղեցոյ գրասենեակ (514) 279-3066, այլապէս ենթական իրաւունք չունենար որեւէ խօսք առնելու եկեղեցոյ մէջ, առանց Հոգեւոր Հովիւի գիտակցութեան եւ արտօնութեան:

Շնորհակալութիւն ձեր ողջախոհութեան համար:
Եկեղեցոյ գրասենեակ

ATTENTION

we would like to ask to our beloved faithful to take note that in terms of funeral services the family members before making any heartfelt speech or eulogy, it is necessary to contact the Church Office at (514) 279-3066 or otherwise will not be possible to make any speech in the church without the consciousness and permission of the Parish Priest.

Thank you for your understanding.
Church Office



ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

ԶՕՐԱԻՈՐ ԱՂՕԹՔ

Կ'աղաչեմ, Տէ՛ր Յիսուս, եւ կ'նկնեմ Քու սուրբ Խաչին առջեւ. Անոր բարեխոսութեամբը ընդունէ աղաչանքներս, կատարէ ինդրածներս եւ անոր հետ գորացուր ինձի կոչմանս մէջ, որուն համար կանչուեցայ, ու Քու պատվիրաններուն, որոնք սորվեցայ: Տուր ինձի անորմով զօրութիւն եւ ժուժկալութիւն, զգաստութիւն, առողջութիւն եւ պահպանութիւն իմ անձիս օր ու գիշեր եւ ամէն ժամ՝ ննջելուս ու արթնալուս, ընթանալուս եւ կանգ առնելուս, գործերուն ու տքնութիւններուն, աղօթքի եւ պահքի մէջ, նաեւ՝ Քու կամբքը կատարելուս:

Ան թող ամուր բերդ ըլլայ ինձի եւ հզօր աշտարակ՝ թշնամուս առջեւ: Զարդարէ ինձի սրանով՝ իբրեւ հոգեղեն զարդով եւ իմանալու լույսով:

Եւ Գաբրիելի ահեղ բարբառի օրը՝ սուրբ Խաչդ երեւալիս, լուսավորէ խավարած հոգիս՝ լույսով բարձրանալու անմահ Փեսայիդ առջեւ՝ խառնվելու հայրապետներու երամներուն, մարտիրոսներու դասերուն եւ հրեշտակներու զնդերուն: Ամէն

ՍՈՒՐԲ ԵՓՐԵՍ ԱՍՈՐԻ

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

**SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE
REPOSE OF SOUL**



ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ԿԻՐԱԿԻ, 25 ՕԳՈՍՏՈՍ 2019

Տ. եւ Տիկ. Նուպար եւ Նազէն Թիրաճի,
Տիկ. Էլիզապէթ Միրիճանի,
Տիկ. Չիչէք Թաշճեանի,

Տ. եւ Տիկ. Հրայր եւ Անի Քիրքճիօղլուի,
Պրն. Շահէն Էսմէզեանի եւ զաւակներուն,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ մօր, մեծ մօր եւ մեծ մեծ մօր՝

ԼՈՒՍԻ

ԿՕՊԻԻԼ- ԷՍՄԷԶԵԱՆԻ
(LUSI GOBUL- ESMEZYAN)
Մահուան 40-ին առիթով
ԵՒ

Իրենց սիրեցեալ հօր, մեծ հօր եւ մեծ մեծ հօր՝
ՀԱՅՐԱՊԵՏ ԷՍՄԷԶԵԱՆԻ
(HAYRABED ESMEZYAN)

Մահուան 10-րդ տարելիցին առիթով
(սուրճի սպասարկութիւն «Վաչէ Յովսէփեան»
սրահին մէջ):



Տիկ. Նուարդ Տեմիրի եւ զուակներուն՝ Արթոյի եւ
Ժազլինի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ ամուսնոյն, հոր եւ մեծ հոր, ծնողաց եւ
հարազատներուն՝

ՄԻՀՐԱՆ ՏԷՄԻՐԻ
(MIHRAN DEMIR)

ՀԱՅԿԱԶ ՏԷՄԻՐԻ
(HAYGAZ DEMIR)

ՄԱՐԻԱՄ ՏԷՄԻՐԻ
(MARYAM DEMIR)

ՖԻԼՕՐ ՏԷՄԻՐԻ
(FILOR DEMIR)

ԳԵՂԱՄ ԿԷՕՉԱՍԼԱՆԻ
(KEGHAM GOCHASLAN)

ԱՆՆԱ ԿԷՕՉԱՍԼԱՆԻ
(ANNA GOCHASLAN)

ԵՂԻՍԱԲԷԹ ԿԷՕՉԱՍԼԱՆԻ
(YEGHISAPET GOCHASLAN)

Հոգիներուն ի հանգիստ



Օրդ. Թագուհի Գրիգորեանի եւ ընտանիքին,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ քրոջ՝

ՎԵՐՈՆԻԿԱ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ
(VERONIKA KRİKORIAN)

Մահուան 40-ին առիթով

Ինչպէս նաև՝
Իրենց սիրեցեալ ծնողաց՝
ԱԶՆԻԻ ԵՒ ՄԻՔԱՅԷԼ
ԳՐԻԳՈՐԵԱՆԻ
(AZNIV & MICHAEL
KRIKORIAN)
ԵՒ
ՄԷՐԻ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ
(MARY KRIKORIAN)
ՄԱՐՏԻՐՈՍ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ
(MARDIROS KRIKORIAN)
Հոգիներուն ի հանգիստ

**ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԱՑՈՅՑ
ՅԱՌԱԶԻԿԱՅ ՇԱԲՈՒԿԱՆ
ՕԳՈՍՏՈՍ – AOÛT**

26, Երկուշաբթի – Թ. օր Վերափոխման
Lundi 26 – *9^{ème}* jour de l'Assomption

27, Երեքշաբթի – Տօն Սրբոցն Յովակիմայ եւ Աննայի՝
ծնողաց Սուրբ Աստուածածնին եւ կանանցն իւղաբերից
Mardi 27 – Fête de Saint Joachim et de Saint Anne, parents de la
Mère de Dieu et des Saints femmes de l'embaumement

28, Չորեքշաբթի – Պահք Mercredi 28 – Jeune

29, Հինգշաբթի – Տօն Սրբոյն Երեմիայ մարգարէին
Jeudi 29 – Fête du prophète Jérémie

30, Ուրբաթ – Պահք Vendredi 30 – Jeune

31, Շաբաթ – Տօն Սրբոց առաքելոցն Թովմայի, Յակոբայ եւ
Շմաւոնի
Samedi 31 – Fête des Saints Apôtres Thomas, Jaques et Siméon



ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN

ԿԻՐԱԿԱՄԱՏԻՑ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ



Միրով կը յայտնենք, թե
Շաբաթ, 31 Օգոստոս 2019-ի
երեկոյեան ժամը՝ 5-ին, երեկոյեան
(Կիրակամտից) ժամերգութիւն պիտի կատարուի
Մոնթրէալի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ
Առաջնորդանիստ Մայր Եկեղեցոյ մէջ:

Այսու կը հրաւիրենք մեր հաւատացեալները
ներկայ գտնուելու հոգեպարար այս
արարողութեան:

Օրհնութեամբ՝

Հարգելի՛ ծնողներ, տեղեկացնում ենք, որ սեպտեմբերի 8-ից նոր որակով և ընդլայնված ծրագրով սեկնարկում է Մոնթերայի Սուրբ Գրիգոր Լուսավորչի եկեղեցու կիրակնօրյա վարժարանի 2019-2020 ուսումնական տարին:

Կիրակնօրյա վարժարանը նոր ուսումնական տարում առաջարկում է հետևյալ դասընթացները.

1. Հայոց լեզու
2. Հայոց պատմություն և հոգևոր գիտելիքներ,
3. Մանկապատանեկան երգչախումբ,
4. Շախմատ (ճատրակ),
5. Նկարչություն,
6. Խոսքի մշակույթ (թատրոն, ասմունք):

Խնդրում ենք ընդունել ի գիտություն, որ կատարվել են որոշակի փոփոխություններ կիրակնօրյա վարժարանի դասընթացների կազմակերպման կարգում.

- դասընթացները սկսվելու են 10:30-ին և ավարտվելու՝ 14:00-ին:
- դասընթացների համար գանձվելու է խորհրդանշական գումար՝ 1 երեխայի դեպքում ամիսը 15 դրամ, երկուսի դեպքում՝ 25 դրամ, իսկ երեքի դեպքում՝ 33 դրամ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ներկայումս քննարկվում է նաև տրանսպորտի ապահովման հարցը (յուացուցիչ վճարի դիմաց):

Ձեր բոլոր առաջարկությունները կարող եք ներկայացնել Կիրակնօրյա վարժարանի պատասխանատուներին անձամբ կամ հետևյալ էլեկտրոնային հասցեներով՝ haykpetrosyan80@gmail.com կամ alinabezhanyan1@yahoo.com:

Երեխաներին գրանցելու համար զանգահարեք՝

Ալինա 438-889-8167 Հայկ 514-619-7098

